Բ. ՏԱՐԻ — ՇԱԲԱԹ 16 ՅՈՒՆԻՍ 1899 — ԹԻՒ 137

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ
ուշկարիոյ համար
Տարեկան 10 Ֆր.
Վեցամսեայ 5 »
Արտասահմանի համար Տարեկան 12 »
Վեցամսեայ 6 »
Ամերիկայի համար
Տարեկան 2.50 տլր.
Վեցամսեայ 1.25 »
ԿԱՆԽԻԿ ՎՃԱՐԵԼԻ
—)(—
Հանուցման տողը 20 սանտիմ է. երեքին աւելի անգամներու համար 20 0/0 զեղչ կըլլայ։

ՇԱՐԺՈՒՄ

ԼՐԱԳԻՐ ԱԶԳԱՅԻՆ. ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՒ ԳՐԱԿԱՆ
ԿԸ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԻ ՇԱԲԱԹԻ ԵՒ ՇԱԲԱԹ ՕՐԵՐԸ

Դիտակ եւ դրամ դրկել խմբագրութեանս հասցէին
—
Редакция на вѣстникъ «Шаржумъ» Варна.
Redaction du journal «Charjoum» Varna (Bulgarie)
—
Դրութիւնք ետ չեն տրուիր

)(ԳԻՆ 10 ՍԱՆԹԻՄ)(

ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ Յ. ՍՈՒՔԻԱՍԵԱՆ

)(ԳԻՆ 10 ՍԱՆԹԻՄ)(

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ

—

Քաղաքիս Ազգ. երկսեռ վարժարաններու հրապարակային տարեկան հարցաքննութիւնները պիտի սկսին յառաջիկայ Յունիս 20ին, կիրակի օր, եկեղեցիի աւարտումէն յետոյ, ժամը տասն ու կէսին և պիտի վերջանան 12 օրուան մէջ։

Քննութեանց ժամերն են.

Ամէն օր, առաւօտները ժամը 9 ու կէսէ—12, իսկ կէս օրէն յետոյ 2 ու կէսէ—5։

Փափաքող ազգայինները կը հրաւիրուին ներկայ գտնուիլ։

Տնօրէն-դասատու
Վ. Շահրիման

Վառնա, 14 Յունիս

ՓԱՌԱՒՈՐ ԱՊՏԱԿ

—

Ընչին, սղորմելի հաշիւների համար լարուած էնտրիգները զզւելի են։ Զզւելի են նրանք մանաւանդ այն ժամանակ, երբ անհատական շահերի համար զոհւում են հասարակական շահեր... թէեւ խիստ չնչին։

Մի խումբ գնչուներ, սատմոքսի գերի սղոսներ իրենց անհատական չնչին շահերի համար աշխատեցին մոխիրը խառնել։

Հարցը խի՞ստ չնչին է, բայց իբր օրինակ խիստ գովելի։

Օրմանեանի անունը մի երկու շաբաթ դադարեց յիշւելուց։ Գնչուների բանակը շուտով սկսեց սղալ դէպի գիւրութեամբ գործիք դարձող աղաները և իրենց պարտատէրերի գերի քահանաները... իսկոյն գտնուեցան փողոցային անհատներ, որ պատրաստ էին աղմուկ, կռիւ հանել։

Գնչուների ուղածը կռիւ ու խառնակութիւն է, միայն մի պայմանով. իրենց անձը մնայ մութի մէջ, իսկ կռիւը լինի, որ իրենք ձուկ որսան, իրենց զզւելի եսական շահերը առաջ քշեն։

Յունիս 6ին յաջողեցաւ նրանց յիշել ապ գարշելի անունը և այն էլ «տեղացու և դրսեցու» քայքայիչ խնդիրը ծագեցնելու գնով։

Բայց այս անգամ երիտասարդութիւնը ցոյց տուեց, որ ինքն այլեւս մութ ձկնորսների թակարդը չի ընկնի, նրանցից այլեւս չի խաբւի։

Պատիւ տեղացի երիտասարդութեան։ Միաբերան ստորագրութիւն ժողովեցին և աւագերէցին յայտնեցին, որ չպէտք է յիշւի հայութեան թշնամու անունը։

Եւ յունիս 13ի կիրակի օրը չյիշւեցաւ...

Այսպէս ուրեմն տեղացի և դրսեցի այլեւս չկայ. կայ միայն Վառնայի Հայութիւն։ Աղնիւ մասը միացաւ, ստոքի ելաւ մի քանի սղոսների դէմ։

Դա մի փառաւոր ապտակ էր այն գնչուների երեսին, որոնք ուզում էին «տեղացու և դրսեցու» խնդիր ծագեցնել... իսկ աղնիւ երիտասարդութեան ձեռքի մի շարժումը օդը ցնդեցրեց և գնչուների մութ լարերը, ե՛ւ կեղծաւոր տէրտէրների 6 տեսակ դիմագծերը... և խառնակութիւններից օգտւելու համար ատամները սրող մոխիր խառնողների բոլոր չանքերը։

Ուզում էին, որ երիտասարդութիւնը գայ, անկարգութիւն հանէ. կռիւ ծագի իրենց վարձկան գործիքների և աղնիւ երիտասարդութեան մէջ։ Իսկ այդ ժամանակ իրենք՝ ձեռքերը շփելով՝ մօտենան այս ու այն աղային, ականջից փսփսան. «մեղաւորը «Շարժումն» է, մեղաւորը ուսուցչական մարմինն է»։

Եւ այս ամէնը նրա համար, որ մի քանի բաժանորդ խլեն «Շարժումից կամ վարժապետներին հեռացնել տան և իրենք նրանց տեղը բռնեն... թէեւ աւելի շատ իրենք հորթարածներ կարող են լինել, քան մանկավարժներ։

Ո՞չ, երիտասարդութիւնը հասկացել է ձեզ, Պ. Պ. գնչուներ. որքա՞ն կուզէք կեղծեցէք, որքան կուզէք գիմակաւորուեցէք... օգուտ չունի այլեւս. ձեր դիմակները պատռել են, ձեր բարոյական գարշելի պատկերը պարզել է նրա համար։

Իր խօսքը առաջ տանելու նոր վարժուած մաքուր երիտասարդութիւնը չի թոյլ տայ ձեզ անբարոյականացնելու եւ բթացնելու մատաղ սերունդը։ Նա ձեր առաջ ընդմիշտ փակել է հայ դպրոցի դռները...

Իսկ «Շարժումը» իբր խառնակիչ ներկայացնելու ձեր ձգտումը, տիրացու գնչուներ.՞.՞.՞.՞.՞ միայն արհամարհական մի ժպիտ է խաղացնում մեր շրթունքների վրայ։

Ինչէ՞ մութ անկիւնները, գնացէք խուլ խորշերը. լոյսի մէջ դուք գործել չէք կարող. լոյսը ձեզ վնաս է։ Համերաշխ է դառնում տեղական երիտասարդութիւնը։

Եւ օրինակը վարակիչ է։ Այսօր այս տեղի երիտասարդութիւնը համերաշխ մի քանի տարեց, վաղը կանէ նոյնը Ռուսչուքինը, Շումլուինը, Նիկոպոլինը, Դաւհիրէինը...

Միացիր, համերաշխ գործիր, հայ մաքուր երիտասարդութիւն. քո համերաշխ բողոքող ոգուց է կախուած հայութեան փրկութիւնը, նրա միջի ցեցերի բարոյական մահը։

Այո՛, միացիր, հայ երիտասարդութիւն։

ԳԱՍՊԱՐ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԴԷՊՔԵՐԸ

—

Եւրոպական թերթերը, որոնց մէջ և խիստ տաճկասէրները՝ կը հաղորդեն հետեւեալը.

Մշոյ մէջ եղած թուրքական ժանտարմերիին փուլով քանի մը հարիւր համիտիական ձիաւորներ Սասունէն օգնութեան կանչելով՝ գնաց Ցրոնք անուն հայաբնակ գիւղին վրայ. ուրկէ հայ հայրենակցին խմբի պետ յայտնի Սերոբը իբր թէ օգնութիւն է ստացած եղեր և հոն պահուած։ Ցիշեալ հայ գիւղի իշխանաւորները կը պարզեն քուրտ զօրքերուն, որ Սերոբը հոն ոչ եկած է, ոչ ալ այժմ կը գտնուի։ Բայց այս վստահացման չեն հաւատար քրտերը և կը սկսին տանջել Ցրոնքի բնակիչները։

Գիւղի հայ մեծամեծները ղէն ի ձեռին դիմադրութեան կելլան։ Կը յառաջանայ արիւնալի ընդհարում մը. ուր բազմաթիւ սպաննուածներ և վիրաւորներ կիյնան երկու կողմէն ալ։ Քուրտ ուժերը զօրքերու ֆանատիկոսութիւնն այնչափ կը գրգռի, որ գիւղի բնակիչներուն մէկ մասը կը կոտորեն և գիւղն ալ կրակի կը մատնեն, տանելով իրենց հետ գիւղացիներու ունեցած ոչխարները (1000ի չափ եղ և ոչխար)։ Ժողովրդի այն մասը, որ փախչելով ազատած է, լեռներն է ապաստանած։ Եաքէն ժանտարմները և քուրտ ձիաւորները կերթան կը լեցուին Սասունի և Մշոյ մէջ գտնուող Սուրբ Աղբրիկի վանքը, հիմնայատակ կը կործանեն մենաստանը, կը կողոպտեն վանքը և անոր պատկանած եկեղեցին և վանքի վանահայրն ու անոր ստորադրեալ երկու արեղաները կը սպաննեն։ Ատկէ ալ եաքը կաւերեն մօտակայքի 5 հայ գիւղերը, որոնց բնակիչներու մեծագոյն մասը փախչելով կազատի։

* *

Այս է հաղորդուած տխուր լուրը։ Քանի մը գիւղեր ալ աւերակ դարձան... քանի մը տասնեակ հայեր ալ սպաննուեցան... բայց աս անգամ գէթ ղէնքով դիմադրեցին... թշնամիներէն ալ զոհեր առին։

Ցրոնք գիւղը Մուշէն դէպի Սասուն տանող ճամբու վրան է։ Ամուր, լեռնային գիւղ մը, փոքրաթիւ, բայց զուտ հայ ազգաբնակութիւնով։

Ցրոնքէ Սուրբ Աղբրիկ երթալու համար երկու ճանապարհ կայ։ Առաջինը կանցնի գաշտայինՍոխում, Ալուտինճ և Մատնիկ հայաբնակ գիւղերով, իսկ երկրորդը կանցնի Ցունան, Սոխում, Խասգիւղ, Խոլոսիկ (կէս հայ, կէս քուրտ) գիւղերով, ուրկէ քիչ մը հեռուն Սեւ Լեռան

շղթան է. այդ շղթան անցնելով՝ կը մտնէ «Բռնաշէն» (այս գիւղը Խութ գաւառի մէջ կիյնայ) անկէ ալ Ս. Աղբրիկ։

Մենասանի գիրքը բաւական զօրաւոր է։ Վանահայրն էր Ղաղար վարդապետը. անձ մը որու մէջ խաչն ու սուրը անբաժան միութիւն մը կազմած էին։ Միշտ զինուած, նոյնիսկ պատարագի ատեն. հանգուցեալը նոյնը սովրեցուցեր էր և իր միաբաններուն։ Շնորհիւ զէնքի փրկարար ուժի, սարսափ էր ձգած շրջակայ քուրտ աւազակներու վրայ։ Անոնցմէ ոչ ոք կը համարձակէր Ս. Աղբերկայ վրայ երթալ։ կամ Ղաղար վարդապետը կողոպտելու ելլալ, չնայելով որ ասիկայ միշտ մինակ, ձիով ու իր անբաժան հրացանով 8 ժամ լեռնային վտանգաւոր ճամբաներ անցնելով՝ Մուշ կուգար կերթար։

Քիչ են մեր մէջ Ղաղար վարդապետները. ադոր համար ա-նոր կորուստը եւս խիստ զգալի է։

Գ.

ԹՂԹԱԿՑՈՒԹԻՒՆՆԵՐ

Պուրկազ, 12 Յունիս

Անցեալ թղթակցութեանս մէջ պարզած էի տեղւոյս գաւառացի բանւորներու հարստահարուած վիճակը և անոնց ցաւերը։

Այժմ ալ կուզեմ խօսիլ անոնց հարստահարող ցեցերու մասին։

Տիպար հարստահարիչներ անպակաս են ոչ միայն բանւորներէն դուրս եղածներու մէջ, այլ և ազգային պաշտօններ վարելու կոչուած իբր թէ ուսեալ դասակարգին մէջ։ Ասոնք լաւ ուսումնասիրած են այդ խեղճերու վրայ թաղաւորելու եղանակը։ Առաջ պառակտում կը սերմանեն. ապա-տոտ կուսակցական վէճեր կը գրգռեն և ետքէն երկու վիճող կողմերն ալ կը շահագործեն թէ նիւթապէս և թէ բարոյապէս։ Վարժապետը ձեղի օրինակ։ Անոր ինչ բարոյական ունեցածը արդէն ամէնուն յայտնի է։

Գէթ այդ ցեցերը ինքզինքին նիւթապէս ապահովէին... ադ ալ չկայ. միշտ պարտքերու տակ են։ Անիրաւութիւնով հաւաքած դրամին դիւեռուններու, շանթաններու և այլ անվայել տեղերու մէջ կը շռայլեն։

Եթէ խղճմտաւոր մէկ մը համարձակի անոնց դէմ խօսիլ, անոնց գործունեները բանալ, դաւադրութեան ու հալածանքի բաժին կըլլայ. կը մնայ առանց գործի։

Իսկ աւելի զզուելի ցեցը գաւառացի բանւորի համար՝ անոր ծոցէն ծնած, անոր պէս ադէտ բայց անկէ խորամանկ ապրուկն է։

Առանկ տիպար մըն է Վ. չավուշը, որ երկու տարի շարունակ ամէն տեսակ ստոր միջոցներով կրցաւ իր ձեռքը առնել տեղւոյս մաքսատան հանքածուխի, քարիւղի, ալիւրի և աղի գործերը, կոտրելով վարձագինը և բանւորներու աշխատութեան վճարը։

Ահա տիպար անձ մը։ Ինքը ադէտ է, բայց լաւ գիտէ ազգային գործերը շահագործելու միջոցները։ Ինքնակոչ թաղական խորհրդոյ անդամներէն մէկն ըլլալով՝ ապուշ սնափառութեամբ կը պարծենայ։ Թաղ. Խորհուրդը արդէն բաւական ատեն է իր հրաժարականը տուեր է Արժ. Տ. Գարեգին հօր, իսկ այժմ նորէն կուզէ իր պաշտօնին անցնիլ, որովհետեւ պէտք է զգայեր եկեղեցիի և դպրոցի անունը շահագործելու իր անձնական շահուն համար։

Այդ ադէտ մարդու օգնութիւնովն է որ խաչագող-դասատուն ամէն ղեղծումներ գործեց և այժմ ալ նոյն մարդու հետ միասին խանութէ խանութ, սրճարանէ սրճարան ընկած կաշխատի ինքզինքը արդարացնել և ձեղած ամէն զզուելի գործերու յանցանքը քահանային վրայ բարդել։

Սակայն մենք չենք կրնար անտարբեր մնալ դպրոցի և եկեղեցու մէջ կատարուող այս ղեղծումներու հանդէպ։ Պիտի չանենք հրապարակ հանել այդ ազատ անձերու իսկական կերպարանքին։

Ասով ահա կոչ կընենք իրենց՝ տեղւոյս մէջ ընկերական դատաստանի դիմել... ամէն պայման յանձն կառնենք, միայն թէ մեր մատաղ սերունդը ազատի անբարոյականութեան ճանապարհէն և մեր գաւառացի մշակները ճանչնան իրենց արիւնը ծծող ապրուկները։

Թէ պատիւ ունիք, եկէք դատի։ Տողերուս գրողը ձեզի լաւ ծանօթ է։

ԴԻՏՈՂ.

Սիլիստրէ, 7 Յունիս

Նախկին Խուզակ Թերթի խմբագիր Տ. Գառնիկ Մազմանեան հոս քանի մը օր հիւր ըլլալով դիմած էր տեղական երիտասարդութեան, որ իրեն ազակցին բանախօսութիւն մը ընելու։ Երիտասարդութիւնը հաճոյքով օգնեց անոր և յունիս 6ին տեղւոյս արական դպրոցի սրահին մէջ լսարան մը ունեցանք։ Հիւր բանախօսը ճառեց «գաստիարակութիւն եւ նկարագիր» նիւթին վրայ։ Երկուքի ալ մեծ նշանակութիւնը ազգերու կեանքի ու առաջադիմութեան համար բաւական յաջողութեամբ պարզուեցաւ Տ. Մազմանեանի կողմէ։

Բացի հիւր բանախօսէն, ճառեցին եւ Նահապետեան, Շալճեան եւ Ակարի զանազան հանրօգուտ նիւթերու մասին։ Բազմաթիւ ունկնդիրներ զոհ սրտով հեռացան, սատանալով մտաւոր ու բարոյական օգուտներ։

Ցաւալի է, որ տեղւոյս ընթերցընկերութիւնը պիտի չարունակէ այդ օրինակ բանախօսութիւնները լսարանի ձեւով եւ առով պիտի արդարացնէ իր կանոնագրութիւնը։

Ուրախալին այն է որ հոս չկան այն ներքին անհամաձայնութիւնները, կիրքերը եւ կռիւները։ Հոս երիտասարդութիւնը խիստ համերաշխ ու համբերատար է։ Իրար լսել, իրարու խօսք հասկնալ կայ։ Երանի թէ քիչ մը այդ յատկութիւնները Ռուսչուքի, Վառնայի ու Ֆիլիպէի ալ տրուէր։

Վաղինակ

ԲԱՐԻԶԵԱՆ ԱՐՁԱԳԱՆԳ

—

Նախընթաց նամակիս մէջ խօսեցայ Բարիզի հայերու ազգասիրութեան մասին. այժմ ալ կը շարունակեմ լրացնել նոյն նիւթը։

Մի որ եւ իցէ Սուքիաս վարդապետ Պարոնեան, հազար անգամ իր սենեակին մէջ յեղափոխութիւնը պարտուելէ վերջ, ու

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՅԵՂԱՓՈԽՈՒԹԻՒՆ ԹԷ ԾԱՂՐԱԾՈՒԹԻՒՆ

—

(Շար. նախորդ թիւեն եւ վերջ)

Ո՞ւր գործէին հայերը, ո՞վ գործէր եւ ի՞նչպէս։

Դեռ Ռուս-Տաճկական պատերազմի ժամանակ փառաւոր առիթներ կային մի բաժակ օղիով կամ մի սպիտակ հացով մի հրացան ձեռք բերել... Այդ դեռ ոչի՛նչ։ Զրի առաջարկեցաւ... Նորից մերժեցին։ Տիրացո՛ւ ժողովուրդ!!! Մերժեցին ինքնապաշտպանութեան միակ միջոցը Տաճկաստանի նման մի գազանանոցում, ուր «մարդը մարդու համար գայլ է»՝ կրկնելով սիրացուական խօսքը. «ով որ սուր հանէ, սրով կը մեռնի»...

Դեռ 90 ական թուերին Դաշնակցականները 150ի չափ հրացաններ բաժնեցին ներքին գաւառներից մէկում՝ այդ «ազգային հրացանները» ծախուեցան քրդերին... Հասկանո՞ւմ էք իրդերին ճախուեցան.. հայերի ձեռքով...

Ողորմելի՛ ուղեղներ, եւ դուք ուզում էք, որ 90 թուերին իր հրացանը քրդին ծախող հայը այսօր ընդունակ լինի մէկէն ի մէկ ընդհանուր ապստամբութիւն առաջ բերելու... Դրանով դուք ցոյց էք տալիս ձեր ուղեղի խղճալի վիճակը եւ ոչ վարժապետանների, Բաֆֆիների եւ ներկայ էպպէս յեղափոխական գործիչների սխալները...

Գաւառներում մի նամակ գրելու, մի որ եւ է ձեռնարկի ինիսիաֆիվ յղանալու ընդունակ մարդ չկար... Եղածները դրսից եկած (Ռուսաստանից, Պոլսից, Փոքր-Ասիայից—Մարզուան, Եօզղատ եւայլն) անհատներն էին, որ ժողովրդի մէջ դեռ ոչ մի արմատ չունէին։

Իսկ Պոլիսը լցուած էր 200 000 ից աւել հայերով։ Դրանից զատ կային մօտ 50—60,000 գաւառացիներ։ Կար որոշ չափի կրթութեան աէր, ֆրանսիական քնաւորութեամբ, տաք գլուխ մի երիտասարդութիւն։ Կար հարստութիւն։

Բռնկելու բոլոր նիւթերը կային։ Եւ ծակ-փիլիսոփաները վեր են կացել կոկորդներն են պատռում, թէ ինչո՞ւ նրանք չգնացին գաւառ, լոյս չտարան, չկազմակերպեցին... որ մի օր հրաշքով «լաւ կազմակերպուած ապստամբութիւն մը պայթեցնէին»... Բրա՛վո, հասարակաղէսներ... եւ դուք ելել լրագիր էք հրատարակում. կամքի ազատութեան ու պատճառականութեան մասին «խօսուրդներ» իսկական «զէվզէկութիւններ» էք գրում...

Նիւթերը հաւաքուած էին Պոլիս եւ Պոլսում էլ պայթեցան. սա բնական անդիմադրելի մի օրէնք է։ Վրայ հասան ամերիկացիների հիմարկութիւնները. մարդիկ հասցրին... այնտեղ էլ աւելի շուտ պայթեց։ Ցիշեցէք Եօզղատը, Մարզուանը եւայլն։

Եւ պէտք էր Պոլսում գործել ուղեղ որոշ դէպքերում պէտք է։ Միայն գաւառի արած ամէն մի քայլը սուտ էր համարուում։ Օրինակ չէ՞ արդեօք Սասունը 94ին։ Միայն մի Էմիլ-Դիլիօն յանդգնեցաւ ներս մտնելու, հաստատելու, աշխարհի առաջ պարզելու։

Վանի, Մշի, Էրզրումի, Սասունի բոլոր հերոսութիւնները հաղիւ մի փոքրիկ ուշադրութեան արժանացան Եւրոպայի կողմից, իսկ Պոլսի ամէն մի քայլը խէնջարի մի հարուած էր Եւրոպական շահերի սրտում...

Այո՛, դեռ պէտք է Պոլսում գործել, միայն որոշ տակտով, որոշ ժամանակում։

* * *

Եթէ մի բան կարող ենք պահանջել մեր յեղափոխական կազմակերպութիւններից՝ դա անպատճառ աւելի տակտով գործելն է։

Տակտով, խոհեմութեամբ ասելով, ես չեմ հասկանում այն չարաբաստիկ բանաձեւը, որ կրկնում են միշտ մի որոշ կարգի կիսայեղափոխական-կիսասարուկ արարածները. գաղարեցնենք ամէն մանր շարժում եւ միայն մեծ ապստամբութեան պատրաստուինք»։

Ո՛չ. մենք խորին կերպով համոզուած ենք, որ այդ սիրուն բառերը միայն դիմակներ են սեփական անզօրութիւնը թաղցնելու, ամէն տեսակ գործից փախչելու ստոր տրամադրութիւնը ծածկելու համար։

Որոշ տակտ ասելով մենք հասկանում ենք ուժերի աւելի արդար բաժանում մայրաքաղաքի եւ բուն երկրի մէջ։

Այո՛, չպէտք է նիւթական ու մտաւոր ուժերի խոշոր մասերը գործ դնել մայրաքաղաքի վրայ, իսկ գաւառների համար թողնել չնչին նիւթականը եւ երկրորդական մտաւոր ուժերը։

Ցեղ. կազմակերպութիւնը իր ուժերի չորս հինգերորդը, ինքը տասերորդական բաժինը պէտք է գործադրէ բուն երկրի վրայ, միայն մի տասերորդը մայրաքաղաքում։ Այդպէս պէտք է անել այսուհետեւ։

Սրանից առաջ տարբեր էին պայմանները. պէտք էր հայկական խնդիրը լալկան, հրէայ ժողովրդի սարսած սեւերի շրջանակից ազատել. պէտք էր նրան տալ սուր կերպարանք Եւրոպական ժողովրդների եւ ոչ դիւանագիտութեան առաջ։ Պէտք էր ապացուցանել, որ «դանակը ոսկրին է հասել» եւ որ այդ վիճակում հայը

չանալով ինքզինք յեղափոխականէ աւելի հաստուն հայրենասէր մը ներկայացնելու, իր ազգին շահերը մտածողի մը պէս։ Իր յայտարարութենէն քիչ վերջ չը վարանեցաւ Բարիզի թուրք դեսպանատան մէջ բարեմաղթութիւններ ընել կարմիր Սուլթանին կենաց, որ բարեհաճած էր կոտորել իր հեռաւոր հայրենակիցները։ Ու այս ապատ մարդը՝ քիչ վերջ, չամչցաւ յայտարարել թէ ինք այդ բանը ըրած էր իր քոյրերը կամ հօրեղբօրորդիները Պոլսոյ մէջ Սուլթանական ճգրանէն ազատելու համար։ Բարիզի հայերը լուռ մնացին այս ցնդած կղերականին գործած ազգադաւ ոճիրին առջեւ, և իրաւամբ՝ քանի որ իրենց դաւանանքն ուս մեւնոյն շաւղին մէջ կը գտնուէր՝—մինչեւ որ Գալիֆաքճեան մը, ազնիւ և հայրենասէր երիտասարդ մը, իր հետ ունենալով քանի մը եռանդուն երիտասարդներ, իր օձիքէն չբռնեց ու դուրս չը նետեց այդ նեխած գանգը Բարիզի հայոց մատուռէն։ Սուքիաս վարդապետի այս անելանելի անկումը Բարիզի բոլոր «ոխմար ազգասէրները» վրդովեց. ճիգեր ու զոհողութիւններ չը խնայուեցան այդ վարդապետը իր Բարիզի հովուական պաշտօնին մէջ հաստատելուն։

Քանի որ հոս խնդիր մը կը յարուցանենք որով Բարիզի հայերու վրայ ծանր պատասխանատուութիւն մը կը բեռցնենք, խղճի պարտք մը կատարած կըլլանք, երբ թուենք այն ամէն դասակարգի անձերը որք ընձեռեցին այդ տխուր վարդապետին ոճիրին և անոր յաւակցեցան։ Թողելով մի կողմ այն որոշ հարուստներու դասակարգը, որ այդ մարդուն ջերմ պաշտպան հանդիսացաւ, ցաւալի էր տեսնել որ կարգ մը ուսանողներ եւս այդ զազիր մարդուն կողմնակից դարձան։ Այս կարգ մը ըսած ուսանողներս չը հասկնաք չորս հինգ հոգի, այլ այդ անունը կրողներու մեծամասնութիւն մը. ու ինչ որ ցաւալի է ըսել ուսանողական միութեան ամբողջ գործ. մարմինը ներկայացողներու վոհմակը։ Զենք ուզեր հոս մանրամասնել թէ ի՛նչ դեր խաղաց այս խնդրին մէջ «Անահիտ»ի «օր նոր՝ գոյն նոր» դամէլիոն հրատարակիչը։

Մեռած է Բարիզի հայերու մէջ յեղափոխական զգացումին հետ իրենց ազգը սիրելու զգացումը։ Ցգէտ պատուելիներ են, որ այս քաղաքակրթութեան որանին մէջ ալ տակաւին իրենց ծակ փորը «կաթայով» կամ «հէլվայով» պարարելու եռեւ է են։

Յեղափոխութիւնը ո՞ւր, ազգասիրութիւնը ո՞ւր և Բարիզի հայերը ո՛ւր. իրարմէ այնքան հեռու են որչափ արեգակը երկրէն։

ՎԱՀԱԳՆ

——)·(——

ՀԱՅԵՐԻ ԿՐԱԾ ՀԱԼԱԾԱՆՔՆԵՐԸ ՌՈՒՍԱՍՏԱՆՈՒՄ

—

Իշխան Գալիցինի չարահնար միջոցները գործադրվում են նոյն իսկ անհատական անբռնաբարելի իրաւունքները բռնաբարելու և կաշկանդելու։ Նրանց ազնաւալի հետեւանքները տարածվում են նոյնիսկ ռուսաստանից դուրս։ Ռուսաստան բնակող հային թոյլ չեն տալիս արտասահմանի հայի վրայ մտածել, նրա ցաւին մասնակցել, նրա վէրքերին սպեղանի դնել... Այո՛, արգիլում են օգնութեան ձեռք կարկառել արտասահմանի դժբաղդ աղգակիցներին։

Հետեւեալ բնորոշ դէպքերը ցոյց են տալիս թէ ռուսական կառավարութիւնը ո՞ր աստիճան առաջ է գնում իր անխիղճ և բարբարոս մտադրութիւնների մէջ։

Յանուն Պարսկաստանի հայ գաղթական որբերի Մոսկվայից Պ. Թովմաս Թումանեանց՝ Սարգիսի առաջնորդին 500 ռուպլի էր ուղարկել։ Ռուս կառավարութիւնը, որպէս զի արգիլէ ապագայ նպաստները և թոյլ չտայ, որ Ռուսաստան բնակող հայերը մտածեն արտասահմանի հայերի վրայ՝ անմիջապէս Թումանեանցի տան մէջ խուզարկութիւններ է կատարում, տեսրակները քննում և արտասահման ուղարկված գումարների մասին հաշիւ պահանջում և հարցափորձի ենթարկում։։։։

Դարձեալ. Մոսկվայի հայ ուսանողները Պարսկաստանի հայ սովեալների համար 108 ռուպլի հաւաքելով՝ Բագարատ աբեղայ վարդապարեանի միջոցով Սարգիսի առաջնորդին էին ուղարկել։ Այդ պատճառով այդ ուսանողների 25ի տները խուզարկում են, նրանց հարցափորձի ենթարկում և համալսարանից արտաքսում։։։։ Այդ հայ ուսանողները ծանր մեղք են գործել՝ իրանց արենակիցներին, իրանց սովեալ եղբայրներին մի պատառ ցամաք հացի փող ուղարկած լինելով։։։։

Այս ծայրայեղ բարբարոսութիւնները տեսնելով ու լսելով, մարդու վրայ ակամայ զայրոյթ է գալիս և նեարդային դրութիւնը այնքան է գրգռվում, որ բարկութիւնից լայ է լինում և լայրին յաջորդում է խելագարի ծիծաղ...։

Է՛լ աւելի ծիծաղելին էլ. վերջերս ռուսական զանազան համալսարաններում պատահած ուսանողական ցոյցերին պատասխանատու են համարում «հայ ուսանողներին։։։», հայերը ամբաստանվում են իբր ցոյցերի ղեկավար—թելադրիչներ և աղի ունեցած խառնակութեանց սկզբնապատճառներ...

Ռուսական կառավարութիւնը ձեռքի տակից գրգռում է վրացիներին հայերի դէմ. վրացիական թերթերին թոյլատրում է հայերի դէմ գրել և գժտութեան ու թշնամութեան որոմներ ցանել երկու ղրացի ազգերի մէջ։

Ռուսահայերի կրած այս ծանր հարուածներից անբաժին չեն մնում նաեւ Պարսկահայերը։ Անոչ մի մջոցի առաջ չի կանգնի Տաճկաստանի, «Եւրոպական խաղաղութեան սպառնացող այդ հակայական վառօդարանի» մէջ մի կայծ նետելու համար, ինչպէս ասում են Եւրոպական մեծ թերթերը։

Եւ հայ յեղափոխականի 9—10 տարեայ գործունէութիւնը պարզ ապացոյցներ տուեց այդ բանին։

Նա ապացուցեց, որ իր անտանելի վիճակից դուրս գալու համար՝ պատրաստ է դիմելու ամէնածայրայեղ միջոցների. որ նա ընդունակ է հոգեմէական հերոսութիւններ անել յանուն ազգային փրկութեան դատի։

Եւ կատարեց։ Այսօր Հայկական խնդիրը դիւանագիտական փոշիներից դուրս է եկել եւ ընկել Եւրոպական ժողովրդների սրտերի մէջ։ Նրանց խլացնել, ձայնխեղդ անել այլեւս անհնար է։ Այլեւս ոչ մի ուժ չի կարող Եւրոպային համոզել, որ Հայկական սարսափներ չկան, որ նրանք առասպելներ են։

Հիմա հային մնում է կազմակերպած պահել մայրաքաղաքը, խաղաղութեան սպառնացող վառօդարանի ամէնավտանգաւոր կէտը եւ ապա առաջ տանել իր ներքին գործերը. կազմակերպութիւնը զօրացնել գաւառներում, զինել ժողովուրդը եւ վարժեցնել նրան աւած զէնքը գործածելու, նրան իր սեփական գլխից աւելի թանգ գնահատելու...

Եւ երբ բուն հայրենիքը կունենայ բաւական թով զէնք ու այդ զէնքը արժանաւորապէս գործածող զաւակներ՝ այն ժամանակ թող պայթի ամէն կողմից էլ...

* * *

Բայց.. որքան գրում եմ նորնոր հարցեր են ծագում. խնդիրը մեծ է. բարդ ու ծանր. նա մի ժողովրդի ճակատագրի հարց է... Որքան կողմեր, որքան կէտեր պարզես, նորերն են ծագում։ Իսկ գործնական խոհեմութիւնը մեզ թոյլ չէ տալիս շատ էլ առաջ երթալու, փաստերով ու թեերով խօսելու ոչ միայն այսօրուայ կամ վաղուայ անելիքի, այլ եւ անցեալի մասին..... Անցեալ դեռ չունի հայ յեղափոխութիւնը. նրա անցեալը երէկն է, որ ամենասերտ ցանցերով հիւսած է ներկայի հետ։ Անցեալը պարզել հրապարակով, տալ է ծառայութիւն անել բռնակալին։

Կարճ կարենք ուրեմն։

Արդեօք յեղափոխականի կամքի՞ցն է կախուած «պատրաստել լուրջ ու հիմնական ապստամբութեան»։

Ո՛չ. դա միայն ցանկալին է եւ ոչ իրականութիւնը։ Այդ բառերը կրկնող պարոնները, երեւի, ո՛չ մի հասկացողութիւն չունին հայ երկրի ներկայ պայմանների մասին։

Ապստամբութեան համար պէտք է զէնք։ Ներսում չկայ կամ շա՛տ քիչ է եղածը։ Տանում ես։ Փոխադրութեան ժամանակ ամէն դժուարութիւն գործ ես դնում, ամէն հնար մտածում անհնարելի, առանց ընդհարման մնալ։ Այդ քեզ յաջողւում է 1—5—10 անգամ։ Տասնըմէկերորդ անգամը սատանայի չարութիւը մաշւում է. խումբդ հանդիպում է մի քանի քրդերի։ Հոան առնում են։ Գալիս է համիտիէն, կանոնաւոր զօրքը, խուժանը։ Ի՞նչ կը հրամայէք անել փոխադրող խմբին։ Զէնքերը նետել փախչի՞լ... Ո՛չ։ Ո՛չ մի իսկական յեղափոխական այդպիսի բան անգամ բերանից չի հանի.... այդպէս կասեն միայն «վարդ ու սոխակ» երգողները։ Ուր մնաց մի կամքիլ բողոքող արիւն կայ, ով հոգով սարուակ չէ՝ նա կռիւ կը կանչէ.... իսկ եթէ խումբը իր սեփական նախաձեռնութեամբ խոնարհութիւն համարեց զէնքը տալ ու կծիկը դնել կամ առանց կռիւ անձնատուր լինել՝ ուրեմն նրա մէջ մի հոգի անգամ յեղափոխական չի եղել. խմբի ընտրութիւնը սխալ է եղել։

Մնում է կռիւը եւ միակ կռիւը։ Իսկ այդ պարագային միշտ յաջողում է մօտակայ գիւղերի թալանը, խուզարկութիւնը, զէնքերի պահեստների բացումը... Եւ ահա վիժում է քո երկար ժամանակ հաղար գուրգուրանքով պատրաստած խոշոր ապստամբութիւնը։ Ամէնայաջող դէպքում նա դառնում է մի մանր գործ, մի մասնակի դինուած ընդհարում։

Այսպէս ուրեմն՝ յեղափոխականի կամքից կախուած չէ ընդհանուր ապստամբութիւնը այլ բազմաթի՛ւ պատահարներից։

Յեղափոխականից մի բան կարող ենք պահանջել այս դէպքում. զգոյշ լինել. աշխատել տեղիք չտալու։ Իսկ եթէ պայթեց՝ անպատճառ կռուել, գործը զոհ է պահանջում։

* * *

Մենք վերջացրինք մեր խիստ համառօտ ու թերի ակնարկը։

Խեղճ ուղեղներ, վարդ ու սոխակ երգեցէք. Լամարթինի, Հայնէի աչիկներով միայն ոգեւորեցէք..... իսկ հայ յեղափոխութեան եւ առհասարակ հասարակական բարդ ու արմատական հարցերի մէջ մի մտնէք։ Ձեր դրիչները ծախուած են... սատանո՞վ... թերեւս... բայց աւելի եւս ձեր մրջնային անհատական ու կուսակցական նեղ շահերով...։ Դուք գրելու ժամանակ ձգտում էք անպատճառ սուեր ձգել այս անձի կամ այն կուսակցութեան վրայ եւ ոչ ճշմարտութիւնը պարզել. հայի ցաւին դարման ճարել...

ԴԱՍՊԱՐ

——)·(——

չաշա յիշած ճնշումների տակ ոչ մի ռուսահայ չը պիտի համարձակվի նիւթական օգնութիւն հայցնել Պարսկահայերի հանրային օրուէ ձեռնարկութեան և հաստատութեան։ Հետեւաբար «ընդհանուր Պարսկահայերի կենդրոնական դպրոցի խնդիրը կարող ենք այժմից չաջողուած մի գործ համարել։ Պարսկահայերը կենդրոնական դպրոցի յարատեւութեան համար ռուսահայերի առատ նպաստների վրայ մեծ յոյսեր էին դրել և այդ միակ յոյսով ձեռնարկել էին հաստատել կենդրոնական դպրոցը։

Երանի՜ էր թէ մեր ռուսահայ եղբայրները համոզմունքով իրանց նշանաբան ընտրէին «հալածումը տարածում է»...։

ՄԻՐՋԱ.

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ

Աղքատախնամս պատիւ ունի ձեզ ղրկել ներկայիս իր վերջին եռամսեայ հաշուեկշիռն, խնդրելով որ հաճիք հրատարակել զայն ձեր մօտակայ մի թերթի մէջ։

Աղքատախնամս իր շնորհակալութիւնն կուղղէ այն ամէն ողորմասէր ազգայնոց, որք դրամական նպաստներով եւ կերպաս, խամէ, եւ նկարէն նուիրելով փութացին մխիթարել քաղաքիս աղքատներն Ս. Զատկի պոմիւ։

Ի դիմաց Աղքատախնամի

Ատենադպիր Ատենապետ

Ա. Ց. Սրվանեան Գ. Դաւիթեանց

Փ. Պոլիս, 5 Յունիս

* * *

ԵՌԱՄՍԵԱՅ ՀԱՇՈՒԵԿՇԻՌ ԱՂՔԱՏԱԽՆԱՄ ՄԱՍՆԱԽՄԲԻ Փ. ՊՕԼՍԻ

1899 Մարտ 1ից մինչ 31 Մայիս

ՄՈՒՏՔ	Լ. Ս.
Նախորդ հաշուէն Գանձապետին քով	7.05
Շրջաբերող չաքաթական գանձանակին հասոյթը	214.95
Մաղկազարդի օրուան պնակներէն	37.—
Զատկի առթիւ կատարուած հանգանակութենէն	140.—
Զատկի առթիւ նուէր	2.—
Մի քրիստոնի հանգանակութենէն աւելցուկ, նուէր	5.—
Դեղագրի մը արժէքին կէսը վերադարձուած	1.20
	407.20

* * *

ԵԼՔ	Լ. Ս.
Հիւանդի համար կաթի եւ ջրի	4.—
Գնուած փայտ, կարողէք, բեռնակրողէք	8.80
Թղթատարի ծախք	—.30
Աղքատախնամի համար պահարանի կղպանք	1.20
Աղքատաց պատահական նպաստ	2.50
» չաքաթական »	66.—
» հացագին	19.85
Բժշկին կառքի ծախք	3.—
Դեղօրէից փոխարէնը	41.45
Գանձանակը պարացնողին վարձք	26.—
Տնտես Տիգրանին նուէր	5.—
Գործողութեան պէտք ունեցող հիւանդ տիկնոջ մը Պոլիս ղրկուելու ծախուց օգնութիւն	15.—
Կարօտ նորեկի մը կարասիքը երկաթուղիէն հանելու	10.50
Կառապան Մելքոնին ձի մը առնելու օգնութիւն	10.—
Զատկի առթիւ 29 աղքատաց տները բաշխուած նպաստ	111.—
Զատկի առթիւ տնտես Տիգրանին հագուստ	25.—
Զատկի առթիւ երեք աղքատի հագուստ եւ կօշիկ	10.80
Զատկի առթիւ բաշխուած զգեստացուներուն համար մանր պիտոյք	6.—
Գանձապետին քով պատրաստ դրամ	40.80
	407.20

ԱԶԳԱՅԻՆ ՔՐՈՆԻԿ

Նոր-Նախիջեւան Տ. Գրիգոր Զալխուշեանի նախագահութեամբ կազմուած յատուկ յանձնաժողով մը ստակներ կը հաւաքէ անմահ բանաստեղծ Գամառ-Քաթիպայի համար արձան մը կանգնեցնելու։ Գամառ-Քաթիպան Նոր-Նախիջեւանցի էր. մեռաւ 1892 թուին և հոն ալ թաղուեցաւ։ Այժմ հաւաքուած ստակը հասած է 1825 ռուբլի 25 կոպէկի։ Նուիրատուութիւնները կը շարունակուին։

— Նպաստից յանձնաժողովը նորէն վճռած է 200 ոսկի ղրկել Վանայ սովելոց և «դաւառի մը ալ որոշեալ գումար մը նպաստ յատկացնել»։

Ո՞ր «դաւառն» է, ո՞րչափ է ղրկուած նպաստը... Ատանկ աչքակապուկ խաղալով միայն հայ ժողովուրդին կասկածը կը հրաւիրեն յանձնաժողովին անդամներն՝ իրենց վրայ... Նպաստ մը՝ է կը ղրկուի դաւառի մը. ինչո՞ւ այդչափ ստրուկ ըլլալ... Նոյնիսկ դաւառին անունը չը յիշել... Նոյնիսկ նպաստին չափը ծածկել...

— Վանէն Պօլսոյ Թերթերուն կը գրեն, որ կաթոլիկներու վարդապետ Անտոն Ջնդոյեան գիւղէն քաղաք եկած ատենը ձին կը խրտչի, վարդապետը վար կիյնայ և կը վիրաւորուի ծանրապէս։ Կը ցաւինք որ... միայն վիրաւորուեր է։

— «Սուրհանդակ» կը հաղորդէ, որ Գէորգ քէն. Հիւրմիւզեան իր անմեղութիւնը հաստատող քանի մը թուղթեր է ղրկած իրեն և դիմած է կրօն. ժողովին քննիչ մը ուղելով։ Կսպասենք վերջնական հետեւանքին։

— Ասլանեան եպս. Վանի վիճակի մասին ղրկեր է իր անդրանիկ տեղեկագիրը։ Պօլսոյ Թերթերը «խոհեմաբար կը լռեն» անոր, հաւանականօրէն՝ կսպասեն ցուցիչ բովանդակութեան մասին։ Սա չափը միայն յայտնի է, որ Սրբազանը ուղեր է 10—12 ոսկի ամսական նպաստ մը որբերուն արհեստագիտական կրթութիւն տալու համար։ Ընդամէնը ղրկուած է Վան 950 ոսկի։

— Վառնայի հայոց Ազգային երկսեռ դպրոցներու քննութիւնները կսկսուին առաջիկայ կիրակի օրը։

— Հայկական կրթարանի տարեկան քննութիւնները կըսկսուին յունիս 20ին. կիրակի օր, ժամը 10ին։

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

ԹՈՒՐՔԻՈՅ ԳՈՐԾԵՐԸ. — Թուրքիայի դրութիւնը կրկին կը խառնակի։ Մէկ կողմէն հայերու ղէն ի ձեռին ընդդիմադրութիւններու փաստերը կը շատնան, միւս կողմէն Պօլսի մէջ խլրտումները կը շատնան. ձերբակալութիւն, հայրենիք վերադարձումը կաճի։ Հոս ցրոնք գիւղը կը դիմադրէ, արիւնալի ընդհարում կունենայ... Հոն Սերոբի խումբը դարձեր է տեսակ մը անդիմադրելի կախարդական ուժ մը զոր տեսնել, ձերբակալել անհնար է տաճիկ կառավարութեան համար։ Երրորդ տեղ մը նոր նոր ղինուած խումբեր երեւան կուգան։

Ադչափը Հայաստանի մէջ։

Իսկ Մակեդոնիոյ Բրիլիբի դէպքե՞ր։ Քանի մը հայդուկային «չետա»ներ ընդհարումներ կունենան. Բրիլիբը ղէնքի կը դիմէ, ընդդիմադրութիւն կը ցուցնէ։

Տեղական յեղափոխական կոմիտէի երկու գլխաւորները անձնասպան կըլլան։ Շփոթ, խառնակութիւն։ Պուլկար հեծելազօնդեր սահմանը կերթան։

Վերջապէս Սերպիոյ սահմանագլխի կատարեալ փոքրիկ ճակատամարտը միւս կողմէն կը ծագի և կը գրաւէ համաշխարհային դիւանագիտութեան ուշադրութիւնը։

Աւազակութիւն, թալան, կոտորած, սնանկութիւն, քաղաքական բարդութիւններ նորէն գլուխնին կը բարձրացնեն։

Սպասենք, թէ ինչ պիտի բերէ մեզի վաղուան օրը։

* * *

Պօլսէն կը հեռագրեն Ֆրանքֆորի թերթին, որ Սուլթանը առաջարկած է Ռուսիային վճռել Տաճկահայ գաղթականներու խնդիրը, զանոնք գաղթեցնելով ու հաստատելով Կրէտէի մէջ, անկէ գաղթած մահմետականներու տեղը։ Կաւելցնեն նաեւ որ Սուլթանը տրամադիր է մատակարարել անհրաժեշտ միջոցները իր առաջարկութիւնը իրականացնելու համար։

— Թուրք-Սերպիական սահմանագլխի ընդհարման առթիւ Բ. Դուռը շրջաբերական մը ղրկեր է դեսպաններուն և ծանօթացուցեր քննիչ խառն յանձնաժողովի ծանուցագրի հետ։ Շրջաբերականը կը յայտնէ, որ Սերպիական արտաքին գործոց նախարարութիւնը կը ծանուցանէ թագաւորին գոհունակութիւնը եղած քննութեան առթիւ և հրամայեր է իր սահմանը գացած գունդերու վերադարձը։

— Կառանտրիայի հանքերու ընդհանուր տեսուչ Տ. Շրվալիէի աւազակներէ գերի բռնուած բլալուն առթիւ Պօլսէն կը հաղորդեն, թէ հանքերու ընկերութիւնը համաձայնութիւն մը կայացուցեր է Բ. Դրան հետ իր պետութեան վճարելիք դրամէն 15,000 ոսկի տալ աւազակներուն և աղատել «դինուորական գերին»։

ՆԱՄԱԿԱՑՈՒՓ

Մեր գործակալներէն ու բաժանորդներէն խմբագրութիւնս կը խնդրէ փութացնել բաժնեգիներու առաքումը։

Բնպակալ պիտի հրատարակենք չի վճարողներու անունները։

ԵՐԿՐՈՐԴ ՆԵՐԿԱՑԱՑՈՒՄ Ի ՆՊԱՍՏ Վաճայ Սովեաշնեռու

Ժողովրդի ցանկութիւնով կը խաղացուի երկրորդ անգամ ՎԱՆԱՑ ՀԱՅԴՈՒԿՆԵՐ (սրբագրեալ), Յունիս 26ին, շաբաթ օրը, Անկէլ Սլավօֆի սրահին մէջ։

Գիները չափաւոր. 50 սանթիմէ մինչեւ 5 ֆրանք տոմակներ։

Տոմսերը վճռուած է տուներ չղրկել. ցանկացողները կարող են դնել Տ. Յովսէփ Բարսամեանի վաճառատունէն։

Ելեւմուտքի վերահսկող յանձնախումբը բաղկացած է Տ. Տ. Տօքթ. Ա.թաբէկեանէ, Ց. Բարսամեանէ և Տիգրան Աճէմեանէ։

ԺՍՂՈՎՐԴԻ ԲԱՆԱՍՏԵՂԾԸ

Քարտաւ-Քաթիպան

Գրեց ԲԱԲԱ-ԴԱՍՊԱՐ։

Պուլկարիոյ մէջ դինը 50 սանթիմ, իսկ արտասահմանի համար 60 սանթիմ։

Ցանկացողները թող դիմեն Շարժումի խմբագրութեան։

«ԲԱՆԱՍԷՐ»

Հանդէս Հնախօսական, Պատմական, Լեզուաբանական եւ Քննական։

Տնօրինութեամբ Պ. Կ. Ց. ԲԱՍՄԱՋԵԱՆԻ.

Տարեկան 20 ֆրանք ամէն տեղ 4 գրքի համար, իսկ մէկ գիրքը 100 էջով, 6 ֆրանք։

Հասցէ՝

M. Basmadjian

112, B-d. Rochechouart, 112

Paris

«ՀԱՅՐԵՆԻՔ»

Ազգային չաքաթաթերթ, տարեկան մէկուկէս տոլար, իսկ արտասահմանի համար 10 ֆրանք։

Հասցէն՝ Խմբ. Հայրենիքի

628 Third Avenue

New York City

(U. S. A)

Отговорникъ: А. СУКЯСОВЪ

Печатница „Взаимность“ Варна.